

ՔԱՐՄԵՆ ՍԻԼՎԱ

— 3 * 3 —

Քերթողարար պաճռաձեւայ անուեղ՝ Ռոս-
մանիոյ Պաշինեկ Եղիասբեր բանաստեղծ
բազուհոյն անունն է, որ ի միջի այլ բա-
զում վիպաց և իմաստասիրական գրուե-
լոց, ունի ինը հատոր ընտիր բանաստեղ-
ծութիւններ զանազան նիւթոց վրայ, որ ընդ
ամենայն Եւրոպա ամենամեծ են և բարգձմա-
նում են ի զանազան լեզուս։ Թագուհիս
իւր բնիկ գերմաներէն լեզուէն զատ՝ որով
գրած է իւր այս քերթութիւնքը, հմուտ է
նաև գաղղիերէնի, անգղիերէնի, իտալերէնի
և այլ շատ եւրոպական լեզուաց, և նոյն
լեզուներով ձառեր և ոտանաւորներ ևս
գրած է զանազան պարագայից մէջ։

Իւր քերթութեաներէն ժողկաջող ընկնով
կը բարգձմանէք և կը ղենէք Բագմավիպիս
մէջ. բայց Եփովս դիւցազներգակ գողտրիկ
քերթութեանը՝ որոն հիմք երգերը բարգձմանե-
լով կը ղենէք այս անգամ, անուշակ վսե-
մութեանն համար արծանի է ամբողջ բարգ-
մանութեան, ընտիր ի մէջ ընտրոց։ Քեր-

թութեան մէջ կ'երգէ մարդոս զԱստուած
ձանլնալու անկազ ծարաւը, 15 փոքրիկ եր-
գերով. դիւցազն է Ահապերոս կամ Աս-
վերոս, որ Պաղեստինէն ձաւթայ կ'ելնէ
զԱստուած փնտսելու նպատակաւ. ներկայ
կ'ըլլայ Յիսուսի ճաղանաց, մահուն, կը
ժողրէ նա, վասն զի իմ Աստուածս, կ'ըսէ,
պետք չէ որ մեռնի խալիս վրայ. և այս-
պէս ձաւթան շարունակելով կ'անցնի Եգիպ-
տոս, կը հարցընէ Մեմնոնի քէ դոն Աս-
տուած ես. և պատասխան մը չընդունելով,
կ'երթայ դէպ ի Հնդկաստան, միշտ ի խնդիր
Աստուծոյ և չի գտներ։ Էր փնտռէ զնա պա-
տերազմի, բանաստեղծութեան, սիրոյ, եր-
շանկութեան, տանջանաց, ծովոց, բազառ-
ութեան մէջ, բայց ի գոչը։ Կ'երթայ դէպ
ի Բեւեր, կ'անցնի Փորթնտիս, Վենետիկ,
ի Զուիցերի. և վերջապէս կը գտնէ զնա
ի բնութեան, փոքրիկ հովտի մը անդորր
կենաց մէջ, և կը մեռնի։

Հ. Արսէն Ղազիկեան

Ե Զ Ո Վ Ա

ՉԵՐԿԻՐ արմաւենեօք ծածկէր ամբոխն խուռներամ,
Զուգին իւր Հանդերձիւք ծածկէր ամբոխն, ես ժրպտէի։
Ընդ քարէ ի պատուհաս ածէր ըզնա, ձրգէր ի խալ։
Արիւն ընդ գլուխն հոսէր գընայր՝ ճակատն համակ արիւններանդ։
Եւ կացեալ իմ Հնդուի ծաղր ըզնովաւ և ժրմտէի։
Քան ըզնա հարկանէին, և ես ասեմ, Աստուած է նա։
Արկին ըզնա ի կենաց, ես յեղյեղում, Աստուած է նա։
Զարարողն ամենեցուն ցոյց ինձ զԱստուած, ես պաշտեցից։
Որ զարփին վարէ զԱստուած՝ ցոյց ինձ և ես պագից երկիր։
Տոյց զԱստուած ինձ ոյր բարբառ մռննչէ Հանգոյն որոտմանց,
Որ զմայրիս կարճովին խրլէ գերդ խոտ, պաշտեցից ես։
ԶԷութիւն նորա գիտել կամիմ, կամիմ լինել Հասու,
Աղածրի գերդ տըղայ մանուկ ըզձայն գիտէ գիւր մօր,